ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«27» 02 2026թ.
No 00224 99

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ
ԲԱԳԱՈՒՏԴԻՆ ԱՀՄԵԴԻ ԱԲԴՈՒՐԱՀՄԱՆՈՎԻՆ
(հասցե՝ ՌԴ, ք. Մոսկվա, Նովորյազանսկայա փող. 36 շենք, բն. 28)

Հարգելի՛ պարոն Աբդուրահմանով,

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2026 թվականի փետրվարի 24-ի ««Հադրութ Գոլդ ՍՊԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի, Դիանա Էդուարդի Սաֆարյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 61-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 61-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-00902/26 վարույթը:

Ձեր լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով կարող եք երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել գրավոր դիրքորոշում և այլ հիմնավորող նյութեր հարուցված վարույթում քննարկվող հարցերի վերաբերյալ: Հիմնավոր միջնորդության հիման վրա երկշաբաթյա ժամկետը Հանձնաժողովի նախագահի գրությամբ կարող է երկարաձգվել մինչև երկշաբաթյա ժամկետով:

Միաժամանակ, Թիվ 61-Ա որոշմամբ հարուցված թիվ ՀԳ-00902/26 վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով չդիմելու պատճառները, հիմնավորումները,

2. Ձեր հետ Օրենքի 4-րդ հոդվածով անձանց խումբ հանդիսացող ֆիզիկական անձանց մասին տեղեկատվություն՝ անուն, ազգանուն, ՀԾՀ, անձնագրային տվյալները,

3. Ձեր՝ այլ ընկերություններում ունեցած մասնակցությունները, այդ ընկերությունների մասին տեղեկատվություն՝ անվանումը, գրանցման տվյալները, գործունեության ոլորտները, գործունեության մանրամասն նկարագրերը:

4. Ձեր հետ Օրենքի 4-րդ հոդվածով անձանց խումբ հանդիսացող ֆիզիկական անձանց այլ ընկերություններում ունեցած մասնակցությունները, այդ ընկերությունների մասին տեղեկատվություն՝ անվանումը, գրանցման տվյալները, գործունեության ոլորտները, գործունեության մանրամասն նկարագրերը:

Տեղեկացնում ենք նաև, որ

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. *Թիվ 61-Ա որոշումը ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, իսկ Հանձնաժողովի նախագահի գրությամբ դիրքորոշում ներկայացնելու ժամկետը երկարաձգված լինելու դեպքում նաև այդ ժամկետում Ձեզ վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու պայմաններում, իսկ իրավախախտման հետևանքները վերացնելու անհնարինության դեպքում միայն իրավախախտման փաստի ընդունմամբ կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:* **Ընդ որում, արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:**

6. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Ընդ որում, նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է Ձեզ վրա:

7. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Կողմն իրավունք չունի ներկայացնելու այնպիսի ապացույցներ, որոնք չեն ներկայացվել վարչական վարույթի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը չի ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1-րդ մասը սահմանում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշելիս վիճարկող կողմի՝ իր համար բարենպաստ հետևանքներ առաջացնող ապացույցների՝ վարչական վարույթի ընթացքում չտրամադրման հետևանքով առաջացած ոչ բարենպաստ հետևանքների ապացուցման բեռը չի կարող դրվել վարչական մարմնի վրա:

8. Օրենքի 93-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարույթով պատասխանող տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի, ոչ ամբողջական, ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացվելու կամ սեփական նախաձեռնությամբ Հանձնաժողով ոչ հավաստի, կեղծ, ապակողմնորոշիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև վարույթով քննարկվող իրավախախտման համար սահմանված տուգանքի չափը, իսկ մի քանի խախտումների դեպքում՝ դրանց համար սահմանված առավել խիստ տուգանքի չափը:

9. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

10. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

11. Ֆիզիկական անձ Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի կողմից ՀԳ-00902/26 վարույթի հարուցումից հետո տնտեսական մրցակցության բնագավառում

իրավախախտման հատկանիշներ պարունակող գործողությունների կատարումը կամ վարքագծի դրսևորումը հիմք են նոր վարույթ հարուցելու համար:

12. **Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:**

Կից ներկայացվում է թիվ 61-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «4» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Համակենտրոնացումների և պետական օժանդակության գնահատման բաժին
Կատարող՝ Մարիամ Եգորյան Հեռ՝. (+374 60) 830 840 ներքին 270

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2026 թվականի թիվ 61-Ա

«ՀԱԴՐՈՒԹ ԳՈԼԴ ՍՊԸ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԲԱԳԱՈՒՏԴԻՆ ԱՀՄԵԴԻ ԱԲԴՈՒՐԱՀՄԱՆՈՎԻ, ԴԻԱՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2026 թվականի փետրվարի 24-ի նիստում, քննարկելով «Հադրութ Գոլդ ՍՊԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Հադրութ Գոլդ ՍՊԸ» ընկերություն**) և ֆիզիկական անձինք Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի, Դիանա Էդուարդի Սաֆարյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի Համակենտրոնացումների, պետական օժանդակության գնահատման և շուկաների վերլուծության վարչության համակենտրոնացումների և պետական օժանդակության գնահատման բաժինը 2026 թվականի փետրվարի 17-ի թիվ Մ-001915/2026 զեկուցագրով առաջարկել է «Հադրութ Գոլդ ՍՊԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի, Դիանա Էդուարդի Սաֆարյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ՝ հայտնելով, որ «Հադրութ Գոլդ ՍՊԸ» ընկերությունում տեղի են ունեցել մասնակիցների փոփոխություն:

Մասնավորապես՝

1. ֆիզիկական անձ Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովը 2025 թվականի

(այսուհետ նաև՝ **Գործարք 1**):

2. ֆիզիկական անձ Դիանա Էդուարդի Սաֆարյանը 2025

(այսուհետ նաև՝ **Գործարք 2**, միասին նաև՝ **Գործարքներ**):

«Հադրութ Գոլդ ՍՊԸ» ընկերության 2025 թվականի ֆինանսական տարվա հասույթի չափը կազմում է

Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն

«Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք)** 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում տնտեսավարող սուբյեկտի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ տնտեսավարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը կամ եթե ձեռք բերողին արդեն իսկ պատկանող փայաբաժնի հետ կազմում է այդ տնտեսավարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 20 տոկոսը:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժին ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը և այն տնտեսավարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժին է ձեռք բերվում:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների արժեքը:

Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված հասույթի չափը:

Հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների, ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 322-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 553-Ն (այսուհետ նաև՝ **Թիվ 553-Ն որոշում**) որոշման հավելված 1-ի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը մինչև գործողության մեջ դնելը ենթակա է հայտարարագրման, եթե համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին կամ դրան նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը:

Թիվ 553-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ համակենտրոնացման մասնակիցների հասույթի ընդհանուր չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացնելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է չորս միլիարդ դրամը, կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը համակենտրոնացման հայտարարագիր ներկայացվելու պահին նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է երեք միլիարդ դրամը:

Տվյալ դեպքում Գործարքին նախորդող վերջին ֆինանսական տարվա՝ 2024 թվականի «Հադրութ Գոլդ ՍՊԸ» ընկերության Հանձնաժողովի թիվ 553-Ն որոշմամբ սահմանված հետևաբար Գործարքները չհայտարարագրելը առերևույթ կարող է պարունակել չհայտարարագրված համակենտրոնացման հատկանիշներ:

Օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրման ենթակա համակենտրոնացումը համարվում է չհայտարարագրված, եթե այն գործողության մեջ է դրվել առանց Հանձնաժողովի՝ համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշման:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ համակենտրոնացումը չհայտարարագրելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

Վերոնշյալի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ նույնաբովանդակ դրույթներ առկա են եղել նաև իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ օրենսդրությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում «Հադրութ Գոլդ ՍՊԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի, Դիանա Էդուարդի Սաֆարյանի կողմից

տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով՝ Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով և 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հադրութ Գոլդ ՍՊԸ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և ֆիզիկական անձինք Բագաուտդին Ահմեդի Աբդուրահմանովի, Դիանա Էդուարդի Սաֆարյանի կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. փետրվարի 25
Երևան